Հավելված N1
ՀՀ ֆինանսների նախարարի 2017 թվականի
մայիսի 30-ի N 265-Ա հրամանի

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2020 թվականի մարտի 30-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/22

«Ջրառ» ՓԲԸ-ի կարիքների համար «թուջե ձուլվածքների» ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2020 թվականի մարտի 28--ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2020 թվականի մարտի 30-ի տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրում N 1 Պարզաբանեք, խնդրեմ՝ ընթացակարգի անվանման մեջ օգտագործվում է «թուջե արտադրանք» ռուսերեն բառակապակցությունը, իսկ Հայտարարության մեջ՝ «թուջե պատրաստուկներ»:

Եթե Ձեզ պետք են ուղղակի թուջե պատրաստուկներ, ապա դրանք հետո անհրաժեշտ է նաև մշակել հատուկ խառատային-ֆրեզերային հաստոցների վրա՝ պոմպերի վրա տեղադրելու համար:

Իսկ եթե Ձեզ անհրաժեշտ է պատրաստի թուջե արտադրանք՝ անմիջականորեն պոմպերի վերանորոգման համար, ապա դա ոչ թե «թուջե պատրաստուկներ» են, այլ կոնկրետ արտադրանք՝ պոմպի քիպացման օղ և սռնակալն.

Խնդրում եմ ճշտել սույն պահը՝ Ձեզ անհրաժեշտ է պատրաստի արտադրանք վերանորոգման համար, թե պարզապես թուջե պատրաստուկներ

Պարզաբանում N 1 Գնումների միասնական անվանացանկում (CPV) բոլոր տեսակի թուջե ապրանքները (բացառությամբ թուջե կափարիչների) միավորված են մեկ ծածկագրի տակ՝ «թուջե արտադրանք» անվանմամբ: Մեր կողմից շահագործվող պոմպերի վերանորոգման համար անհրաժեշտ են թուջե պահեստամասեր՝ պաշտպանիչ սռնակալներ և քիպացման օղեր պատրաստի արտադրանքի տեսքով:

Սակայն, շահագործման մեծ ժամկետով պայմանավորված առկա պոմպերի մաշվածության պատճառով, գործարանային չափերով դետալները չեն հարմարվում և չեն ապահովում անհրաժեշտ աշխատանքային պարամետրերը: Այդ իսկ պատճառով նպատակահարմար է ձեռք բերել թուջե պատրաստուկներ և արդեն մեր ուժերով և ռեսուրսներով ստանալ պահանջվող դետալները՝ հաշվի առնելով յուրաքանչյուր պոմպի մաշվածության յուրահատկությունները և պահպանելով անհատական չափերը:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/22 ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Նարինե Նիկոլայանին:

Հեռախոս՝ 012 74 00 77:

Էլեկտրանային փոստ՝ «sevan_hr.gnum@mail.ru»::

ՀՀՏԿԵՆՋԿ-Ջ-ԳՀԱՊՁԲ-20/22 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով